



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8

7-38

150

Зернистый

Удфизматгруппы

1893

2003

2011

№ 1 Ընթացիկ ԿԱՅԳՈՒՄ-ի: № 1

876

2-38

ՀԱՐԱՆԱՑՈՒԻ

Երևանի քաղաք

1893



Արտատրագր «Շար-Կար»-ին

№ 1 Հրատարակութիւն «ԱՅԳ»-ի. № 1 Շար-Կար

8-3
2-38
Այ 200

Թարգմանիչ
18 13
III 93

ՀԱՐՍՆԱՅՈՒ

(ՍԵՐԲԵՎՅԱՆ ԷՆՆՆԵՅ)

1107

Թարգմանիչ

ՅՈՎ. Հ. ԱՐԱՒԱԶԵԱՆ



ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒ

Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի.

Типография К. С. Саноянца, Александрополь.

Бебутовская ул., соб. д.

1893

Дозволено цензурою, Тифлисъ, 3-го Ноября 1892 г.

ՀԱՐՄՆԱՅՈՒ

1813 թուականն էր:

Սերբերը՝ թէև անյոյս, բայց և այնպէս անվեհեր կերպով շարունակում էին կռուել և իրանց արիւնով պաշտպանել Հայրենի երկիրը: Քաջասիրտ իւնակները*) շատ թշուառութիւններ կրեցին տաճկի ձեռքից, սակայն նրանք դեռ չէին դադարում վրէժխնդիր լինել թշնամուց: Սերբերը վճռել էին հանգստանալ միայն այն ժամանակ, երբ կ'ստանան ի վաղուց հետէ սպասած ցանկալի ազատութիւնը. սակայն՝ այդ բազմալի նպատակին հասնելու համար՝ դեռ պահանջւում էին բազմաթիւ զոհեր և սաստիկ եռանդ:

Այնինչ թշնամին ահագին ոյժերով ամեն կողմից շրջապատեց սերբերին, սարսափը տիրեց նրանց. նրանք լաւ էին հասկանում, որ թըշ-

*) Իւնակ—երիտասարդ:

նամին իւր ահագին ոյժերով կամենում է վերջ-
նականապէս ճնշել իրանց, սակայն ոտքի ելան
կամ մեռնելու և կամ իրանց սիրած երկիրն
ազատելու համար: Այեզարդ քահանաներն ու
թող ճերունինները քաջալերում էին ժողովրդին
և ասում. «Գնացէք նրանց դէմ. լաւ է մեռ-
նել, քան թողնել թշնամուն մեր օրէնքն ու
սուրբ հաւատը ոտնակոխ անելու. մի թողնէք,
որ նա պղծէ ձեր տները»:

Ժողովրդի միակ յօյր իւր գօրագլխի վե-
րայ էր, որին և նա ուղղեց իւր հայեացքը՝ ասե-
լով. «Թշնամին մօտ է, առաջնորդի մեզ կռուե-
լու...»: Սակայն այն ձայնը, որը մի ժամանակ
քաջալերում, սիրտ էր տալիս ժողովրդին, այլ
ևս չէր լսում. նա վաղուց արդէն լուել էր.
այժմ թշնամու լծի ծանրութեան տակ ճնշուած
ամբողջ երկրում լսում էր միայն այս լուսա-
հատ ազդակը. «Գոսպողարը *) փախել է»: Եւ
այդ լուրը վերջ դրեց հերոսական պաշա-
պանութեան համար ձեռք առնուած բոլոր նա-
խապատրաստութիւններին: Ամեն մի սերբէ

*) Գոսպողար—իշխան, զօրագլուխ:

սիրտ կսկծից տրաքւում էր, սակայն նա ստիպ-
ուած էր խոնարհած գլխով տանել այն չարչա-
րանքները, որոնք նրա համար հնարւում էին
անողոք թշնամու ձեռքով—այն թշնամու, որի
սիրտը լցւում էր անսահման ցնծութեամբ ա-
մեն մի նոր գոհ տեսնելիս: Այժմ ամեն ինչ
նրա ձեռքումն էր: Կեանքն ու մահը—որպէս
ողորմութիւն էր բաշխում նա ժողովրդին:
Քրիստոնեաների ողբն ու հառաչանքներն էին
նրա ականջների միակ հաճելի երգերը: Գու-
նատ, վշտահար գէմքերն էին նրա բռնակա-
լութեան գեղեցիկ վկաները:

Ի՞նչ էր տեսնում սերբը իւր շուրջը—հօ-
րը և եղբօրը՝ ցցի վերայ բարձրացրած, մօրը՝
արիւնաշաղախ արած, քրոջը և սիրուհուն՝ ի-
րանց սեփհական ձեռքերով սպանուած, որպէս-
զի թշնամու ստոր կրքերին գոհ չ' գնան: Եւ
այս ամենը տեսնելով՝ նա ստիպուած էր խո-
նարհութեամբ լուել և մինչև անգամ խեղդել
հեծկլտանքը, որը ճնշում էր նրա սիրտը:

I.

Մութ գիշերը պատեց երկիրը և ծածկեց ամեն ինչ իւր սև քօղով. կարծես խղճալով զժբազտ ժողովրդին, նա իջաւ ազատելու անմեղ զոհերին գարշելի թշնամու դաժան հայեացքներից:

Ամեն ինչ հանդարտ էր և լուռ, ոչ մի կենդանի էակ չէր երևում. միայն սև ամպերը խումբ-խումբ առաջ էին սլանում, կարծես շտապում էին ծածկել թէ լուսինը և թէ աստղերը, որպէսզի խաւարն անթափանցելի անեն և չ'թողնեն թշնամուն տեսնելու, թէ ինչ են անում նրանք, որոնք զոգում են իրանից: Արագաթուիչ կայծակը երբեմնակի սուրում էր ամպերի միջով և կորչում գիշերուայ մթութեան մէջ. միայն խուլ որոտը լիշեցնում էր նրա քիչ առաջ յայտնուելը:

Մի գիւղի ծայրում գտնուող խրճիթներից մինի լուսամուտը լուսաւորուած էր: Խըրճիթի անկիւնում՝ անկողնու վերայ պարկած

էր գունատ, նուազած դէմքով ծերունին. նրա դէմքի արտայայտութիւնից կարելի էր հասկանալ թէ որքան վշտեր էր տեսել նա, որոնք պատճառ էին եղած նրա փաղահաս ծերութեան: Եւ լիրաւի՝ ով որ բարձրացնէր ծերունու հիւլանդ կուրծքը ծածկող վերմակը, նա կ'տեսնէր նրա վերայ թշնամու անխղճութեան և նրա սեփհական հերոսութեան բազմաթիւ հետքեր:

Անկողնու մօտ նստած էր մի գունատ՝ բայց չափազանց գեղեցիկ դէմքով աղջիկ: Նրա գեղեցկութիւնը հրապուրիչ էր և հրեշտակալին. սակայն նրա աչքերի, ժպտի մէջ նկատուում էր մի դառն վիշտ, որը մարդու սիրան ակամայից լցնում էր կարեկցութեամբ ու խղճահարութեամբ:

Իսկ Զուրջալի գուսար՝ Լեպան էր — այն Զուրջալի, որը հեծում էր իւր աղքատիկ անկողնու մէջ: Գուցէ ոչ մի թշնամի այն աստիճան քարասրտութիւն չ'ունենար, որ խլէր ծերունուց նրա այս միակ ուրախութիւնը — գեղեցիկ գտերը: Ունայն ենթագրութիւններ...

Զուրջան երբեմն տանուտէր էր գիւղում.

մի հազուադիւտ մարդ էր նա—թանգ չէր գնահատում իւր կայքն ու կեանքը և հէնց որ ժողովորդը լսեուն ազատութեան ոտքի կանգնէր, Զուրջան կռուողների մէջ առաջինն էր հանդիսանում: Սմէն տեղ առաջ էր ընկնում նա, մտնում էր թշնամու ամենախիտ շարքերի մէջ և շատ անգամ նրան կիսամեռ էին տանում կռուի դաշտից: Սակայն թշնամու ոյժը գերազանցեց, թէև նրան չ'աջողուեցաւ ճնշել ազատութեան գաղափարը:

Սմէն ինչ կորցրեց այդ կռիւներում Զուրջան կամ Զուրաշկոն, ինչպէս կանչում էին նրան գիւղացիք: Նրա միակ նեցուկը, միակ ուրախութիւնը—Ղեպան էր, որին նա նշանել էր Եանկոյի որդու՝ Իվոյի հետ: Զուրջան և Եանկոն հինաւուրց բարեկամներ էին և նրանք երկուսն էլ կամենում էին, որ իրանց այդ բարեկամութիւնը հաստատուի և որդւոց մէջ: Բացի դրանից՝ Զուրջան կամենում էր իւր միակ դստեր բազմաւորութիւնը տեսնել՝ քանի դեռ հիւանդութիւնը կամ ծերութիւնը չեն գրկել նրան կեանքից:

Ղեպան անխոնջ հոգում էր հիւանդ հօրը և երբէք չէր հեռանում նրա անկողնուց: Նրանց մօտ յաճախ գալիս էր Իվոն և ամբողջ գիշերներով Ղեպալի հետ նստում հիւանդի անկողնու մօտ: Այդպէս էլ այս գիշեր նրանք նրստած՝ անխորթ աչքերով դիտում էին ծերունուն. նրանց սիրան ուրախացաւ, երբ տեսան, որ վերջապէս նա քնեց և այդ նշան էր, որ նրա վերքերի ցաւը մեղմանում է: Ղեպան թաշկինակով մեղմութեամբ հովահարում էր՝ նստած հիւանդի գլխովերևը:

— Բաւական է, Ղեպան, ասաց Իվոն. հայրդ արդէն քնեց, իսկ քո թեւերը թերևս ցաւեցին:

— Ճշմարիտ ես ասում, Իվո՛, պատասխանեց Ղեպան. նա այժմ իրան լաւ է զգում. տեսնում ես ինչպիսի խաղաղ քնի մէջ է նա: Ո՛հ, երբ պէտք է առողջանայ, անտանելի վիշտն ինձ սպանում է, տխրութեամբ աւելացրեց Ղեպան:

— Իմ թանկագին հարսնացու, բաւական է, մի վշտացնիր ինձ. քեզ տխուր տեսնելով՝ ես...

Նա չ'վերջացրեց, սակայն բռնելով Լեպայի ձեռքից, երկար նայում էր նրա գունատ դէմքին, կարծես մի միտք գրադեցնում էր նրան. չետոյ ուղղելով նրա ճակատի վերայ թափուած մագերը՝ ասաց:

— Երբ հարգ առողջանայ...

Նա նորից կանգ առաւ, նկատելով Լեպայի դէմքի վերայ կասկածի արտայայտութիւն: Նա աւելի պինդ սեղմեց նրա ձեռքը:

— Ուրեմն դու դրան դեռ չես հաւատում, հա՛, հարցրեց Իվօն:

— Ո՛չ, ես հաւատում եմ, պատասխանեց Լեպան. սակայն մի նախազգացում ճմլում է իմ սիրտը, երբ մտածում եմ հօրս, մեր... մասին: Ա՛խ, Իվօ մենք դժբաղտ կ'լինինք... Թըշնամին մեզ թող չի տալ երջանիկ լինելու:

Եւ նա գրեց գլուխը Իվօյի ուսին, իսկ Իվօն այնպէս ջերմագին սեղմեց նրան իւր կրծքին, որպէս թէ կամենում էր պահել նրան թշնամու աչքից:

— Քեզ չեմ տալ թշնամո՛ն, իմ ցանկալի, կեանքս աւելի շուտ կ'առնի նա, քան թէ քեզ:

— Դարձեալ թշնամի... դարձեալ թշնամի... հառաչեց ծերունին:

Լեպան վեր թռաւ տեղից և մօտեցաւ նրան:

— Հայր, հայր, թնչ պատահեց քեզ. ես — քո Լեպադ, ահա մօտդ եմ:

Ծերունին լռեց և նորից ընկաւ ծանր քնի մէջ:

— Լսո՞ւմ ես, Իվօ, նա քնի մէջ էլ չի մոռանում թշնամուն: Ո՛հ, վատ նախազգացումն ինձ հանգստութիւն չի տալիս:

— Աստուծով ամեն ինչ լաւ կ'լինի, ակամայ ասաց Իվօն: Նա ինքն էլ մի տեսակ սարսուռ էր զգում մարմնի մէջ. նրա սիրտը երբէք այնպէս սաստկութեամբ չէր բարախել, որպէս այս գիշեր, բայց նա ամենայն ջանքով աշխատում էր թագցնել Լեպայից իւր անբացատրելի երկիւղը: Ծերունին նորից խօսեց քնի մէջ:

— Թշնամի, կանգնի՛ր, չարագործ... նա փախչում է... արդէն մօտ է...

— Հայր, բացականչեց Լեպան և բռնեց նրա ձեռքից:

Նա վեր թռաւ, նրա շնչառութիւնն արա-

գացել էր, աչքերը փալլում էին և ուժերը կարծես լանկարծ վերադարձել. նա բարձրացաւ տեղից, ըստ երևույթին, որոնելով մի մարդու, սակայն նկատելով միայն Իվոյին ու Լեպային, բացականցեց:

—Ո՛հ, թշնամի, թշնամի...

—Հնչր, երազի մէջ էիր, թէ վատ ես զգում քեզ, հոգատարութեամբ հարցրեց Լեպան:

—Ո՛չ, զնաւիս, պատասխանեց ծերունին. ես ինձ վատ չեմ զգում, այլ մի զարհուրելի երազ տեսայ: Այդ անտարակոյս նա էր:

—Ո՛վ, հարցրեց Իվոն:

—Մեր հօր թշնամին—Սալի-աղան: Ես նրան լաւ ճանաչեցի: Ո՛հ, վտանգը մօտ է:

—Աստուած բարին կ'առաջնորդէ, մտախոհ արտասանեց Իվոն:

—Ես երազումս տեսայ, թէ ինչպէս էին սպանում քո մօրը, դարձաւ ծերունին Լեպային և արտասուքը ցոլաց նրա աչքերում. կաշիներ էին ցայտում այդ աչքերից. նրանց օտարօտի հայացքը կարծես կտրում էր տարածութիւնը. նրա շրթունքների վերայ փրփուր էր

երևում. նա հազիւ լսելի ձայնով ասաց. «մահ»...

Յանկարծ Իվոն ցնցուեց և նրա դէմքն ալլալլուեցաւ. նա լետ նալեց, կարծես օկանջ դնելու մի ինչ որ ձայնի... Նրա դէմքը հետզհետէ աւելի գունատուում էր. նա շշնջաց. «Թըշնամին է» և ձեռքը դրեց գոտկում խրած դանակի վերայ:

—Ի՞նչ պատահեց քեզ, Իվո՛, քո դէմքը սաստիկ գունատ է, ասաց Լեպան՝ մօտենալով նրան և բռնելով ձեռքից:

—Ոչինչ, աղանեակս, հանդարտուիր, ասաց Իվոն, սակայն նրա ձայնի դողողջումը մատնում էր նրան:

—Ուրեմն դու չես սիրում ինձ, որ չես կամենում ասել, թէ ինչ պատահեց քեզ, պնդում էր Լեպան:

—Կեանքիցս աւելի եմ սիրում քեզ, սակայն, հոգեակս... նա նորից դարձաւ դէպի լետին անկիւնը:

—Ո՛վ կայ այնտեղ:

—Նա՛—թշնամին այնտեղ է, շրշնջաց ծերունին. Իվո՛...

Նա չ'կարողացաւ շարունակել. Իվօն հաս-
կացաւ նրա հայեացքը և արտասանեց:

— Հանգիստ կաց, Լեպօ:

Լեպօյին սարսափեցրին այդ խօսքերը, ու-
րոնց մէջ երևում էր մի այնպիսի մարդու
վստահութիւն, որը վճռել էր մեռնել:

— Շուտով բաց արա գուռը, անզգամ,
հնչեց դրսից մի ձայն:

Իվօն բաց արաւ: Շէմքում երևաց դաժան
դէմքով և գազանաբարոյ հայեացքով մի մարդ:
Նրա վերարկուն բոլորովին թրջուած էր. նրա
տակից երևում էր ոսկեկար վարտիքը. գտա-
կում խրած ունէր մի զոյգ արծաթապատ ատր-
ճանակ:

Դա Սալի-ազան էր:

Արագութեամբ սենեակ մտնելով՝ նա մի
վայրենի հայեացք գցեց իւր շուրջը, ինչպէս որ-
սի սպասող մի գազան: Լեպօյին տեսնելուն
պէս, նրա շրթունքների վերայ յատնուեց մի
զգուելի ժպիտ:

— Մօտեցիր ինձ, աղջիկ, և վեր առ իմ
վերարկուն, ասաց Սալին՝ քանզելով կոճակ-

ները:

Լեպօն պինդ կպաւ հօրը և տերեւի նման
գողում էր:

Իվօն կամենում էր մօտենալ և ինքը վեր
առնել վերարկուն, սակայն Սալին բղաւեց.

— Կորիք այստեղից, լակոտ:

Իվօն լռեց և գլխով նշան արաւ Լեպօ-
յին. սա մօտեցաւ վեր առնելու վերարկուն,
իսկ Սալին արագութեամբ գրկեց նրան. սակայն
Լեպօն դուրս պրծաւ նրա գրկից և փախաւ
անկիւնը: Իվօյի գոյնը նեւեց և նրա աչքերը
փայլեցին. նա շտապով կախեց գլուխը, որ Սա-
լին այդ չը նկատէ:

— Ե՛լ, դու, լիմսր ստրուկ, վեր կաց իս-
կոյն, շու՛ն, գոչեց ազան ծերունուն. ի՞նչ ես
այդտեղ քո քէֆին ոտներդ մեկնել. վեր կաց,
ճառալիք աղալիդ:

— Ստուած է վկայ, նա չի կարող, աղա՛,
ասաց Իվօն. տես, նա հիւանդ է և գուցէ
շուտով էլ թողնի այս աշխարհը:

— Լռիր, լակոտ, դուրս կորիք այստեղից և
մանն ածիր իմ ձին, անհաւատ շուն, գոչեց

Սալին:

Իվօն գնաց գէպի դուռը, բայց դուրս չէ-
կաւ սենեակից:

— Իսկ դ՛ու, աղջիկ, փոքր ինձ համար փա-
փուկ բարձեր, ես կամենում եմ, որ դու այս
գիշեր քաղցրացնես իմ քունը:

Սալին մօտեցաւ Լեպային, որ գրկէ նրան,
բայց նա վազեց գէպի հայրը, աշխատելով մի
կերպ թագնուիլ նրա քամակին:

— Հն, հն, հն, սրբան գեղեցիկ է վա-
զում. ինչո՞ւ, իմ թռչնակ, չես կամենում մօտե-
նալ ինձ, ասաց Սալին և բռնեց Լեպայի ձեռքից:
Նա ճչաց և նայեց հօրը, Իվօին:

— Իվօ, հայր, պաշտպանեցէք ինձ, սհ,
թո՛ղ, թո՛ղ ինձ:

Իվօն ցնցուեց ամբողջ մարմնով. կրակի
բոցեր էին ցալտում նրա աչքերից. նա ձեռքը
տարաւ գէպի դանակը:

— Շնորհ արն, Սալի-աղա, ասաց նա, —
մենք մեծ ուրախութեամբ կ'հիւրասիրենք քեզ
նրանով, ինչ որ Աստուած տուել է: Իսկ դ՛ու,
աղա, մի գիպչիր իմ հարսնացուին, եթէ ոչ...

— Օհօ, լակո՛տ, գեռ մի բան էլ հրամայիր...
բղաւեց Սալին, հանելով ատրճանակը և ուղ-
ղելով Իվօին:

Լեպան բարձրաձայն ճչաց և փռուեց գետ-
նին. ծերունին հառաչեց:

Սարսափելի էր այդ բոպէին նայել Իվօյի
գէմքին. մինչև Սալի-աղան ատրճանակի շնիկը
կ'սեղմէր, նա քաշեց իւր դանակը, ձեռքը բարձ-
րացաւ և իջաւ, արիւնը ցալտեց և թշնամին
մեռած գետին գլորուեց...

— Իվօ, բացականչեց Լեպան, արդեօք
կենդանի է նա. հայր...

— Ահա նա արեան մէջ է լողում, պա-
տասխանեց Իվօն. այժմ մնաւ բարեալ հայր,
մնաս բարեաւ, իմ հարսնացու, արդէն սուն
գնարու ժամանակ է: Սալիի գիպը ես կ'զցեմ
գետի մէջ, որ ջուրը աստի մրան:

Նա վեր առաւ գիպը և դուրս գնաց
խրճիթից:

Գցելով գիպը գետի մէջ, Իվօն ուղևոր-
ուեց սուն: Անախորժ և տխուր մտքեր էին
շրջում նրա գլխի մէջ: Բոլորովին անհանգիստ
Հարսնացու

1001
1001

դրութեան մէջ էր նրա սիրտը. անբացատրելի երկիւղը պատել էր նրան և քայլերը՝ հակառակ նրա կամքին՝ արագանում էին:

Նա հասաւ իրանց սրահի դռան մօտ. նա բաց էր: Դժկամակութեամբ փակեց նա դուռը իւր լետեւից. նրա ճըռուցը զայրացրեց Իվօյին: Նա անցաւ սրահով, սակայն՝ հակառակ սովորութեան՝ նրա գեղին հորթուկը չ'եկաւ նրան ընդառաջ իւր սովորական բառաչիւնով. ամեն ինչ լուռ էր: Նա մօտեցաւ խրճիթին—սրա էլ դուռը բաց էր: Իվօյին սարսափը տիրեց. նրա ոտները հրաժարւում էին առաջ գնալու, սակայն նա ճիգ թափեց և մտաւ բակը: Այդ բոպէին քամին հնչեց իւր աղետալի երգը. Իվօն ամբողջ մարմնով դողաց. լանկարծ նա նկատեց, որ սենեակի դուռն էլ խորտակուած էր և ընկած լատակի վերայ: Իվօյի գլխովը մի զարհուրելի միտք անցաւ և նրա հանդէպ կենդանացաւ քիչ առաջ տեղի ունեցած թշնամու բռնութիւնների պատկերը: Նա շուռչն իրան քաշեց, լուսալով գոնէ մի շշուկ լսել. նա չէր համարձակուում քայլերը փոխելու, վախենալով գլորուել թշնամու

մի որևէ զոհի վերայ: Սակայն ամեն ինչ լուռու մունջ էր. միայն քամին էր, որ ազատօրէն ներս էր խուժում ջարդուած լուսամուտներից. Իվօն դուրս եկաւ սրահը:

—Հայր, քոյր, բացականչեց դողդոջիւն ձայնով. գիշերուայ մթութեան մէջ՝ քամու շշուկի հետ լուռեց մի ձայն, որը և իսկոյն լռեց: Իվօն նորից սենեակ մտաւ և կրկնեց իւր բացականչութիւնը. սակայն նրա ձայնը, դիպչելով մերկ պատերին, արձագանք տուեց—ամեն ինչ մեռելային լուռութեան մէջ էր: Նա դողում էր, որպէս տենդահար. նրա գիտակցութիւնը կորչում էր խառնաշփոթ և բազմատանջ մտքերից, գլուխն այրւում էր. վերջապէս նրա ականջին հասաւ մի ծանր հառաչանք. նա ականջ դրեց—և լիրաւի՝ չէր սխալուել—հառաչանքը կրկնուեց: Սակայն դա խլեց նրանից նրա վերջին ոյժը, այնպէս որ՝ շարժուելով տեղից, նա ստիպուած էր պատից բռնել, որպէսզի վայր չ'ընկնի:

Այդ բոպէին լուսնի ճառագայթն ընկաւ ջարդուած լուսամուտից ներս և լուսաւորեց

տենեակը: Իվօն մի հայեացքով ամեն ինչ տեսաւ...
Բարձրաձայն լացուկոծով նա ընկաւ լստա-
կի վերայ փռուած գեակի մօտ: Այդ նրա քոյր
Ռուժան էր: Նա ամբողջովին լսզում էր արեան
մէջ. նրա վէրքի մէջ գեռ խրուած էր մնում
գանակը, որի կոթը գտնուում էր նրա ձեռ-
քում:

Իվօն բռնեց նրա ձեռքերից, համբու-
բում էր այդ արիւնտ ձեռքերն ու գէմքը՝
բայց խօսքեր գուրս չէին գալիս նրա կոկոր-
դից:

Ռուժան կիսով չափ բաց արաւ աչքերը
և ցած ձայնով շշնջաց:

— Հայր, Իբրահիմը...

Նա կամենում էր բարձրացնել ձեռքը,
բայց չկարողացաւ և թողեց... շրթունքները
թուլացան... նա մեռաւ:

— Ո՛հ ես ձեր վրէժը կ'լուծես նրանից,
սիրելի հայր և քոյր իմ. ահա երգում եմ ձեր
սուրբ անունով:

Իվօն խաչակնքեց քրոջ ճակատը և համ-
բուրեց նրան, լեռոյ վերցնելով նրան, արեան

չճակից, դրեց անկիւնում՝ անկողնու վերայ և
ինքը շտապով դուրս գնաց ամայնացած տանից:

Ջուրջայի խրճիթում գեռ կրակը վառւում
էր, երբ Իվօն ներս մտաւ: Մեռելային գունա-
տուլթիւնը ծածկել էր նրա գէմքը, մազերը
բիզ-բիզ էին կանգնած, աչքերը բոցավառւում
էին. ամբողջ մարմինը զոզում էր, կարծես
տենդի մէջ լինէր:

— Իվօ, ինչ է պատահել, տեսնելով նրան՝
բացականչեց Լեպան:

— Թշնամին... սկսեց Իվօն:

— Գարձեւլ թշնամի... Ո՛հ, Ստտուած
իմ, արդեօք ինչով ենք մենք քեզ բարկացրել,
բացականչեց Լեպան՝ ձեռքերն իրար կցելով:

— Հօրս էլ տարան, քրոջս էլ... քրոջս
սպանեցին... ասաց Իվօն ընդհատուած ձայնով.
ո՛հ, թշնամի, կ'գայ և քո դատաստանի օրը,
գու էլ մի օր կ'լողաս քո սեփհական՝ և ոչ թէ
մեր արեան մէջ:

Նա բռունցքը բարձրացրեց և ոտքը խփեց
յատակին:

Լեպան չէր համարձակում նրան հարց ու

փորձ անել: Իվօն ինքը շարունակեց.

—Նրանք մեռան, թշնամին ընդ միշտ մեզ միմիանցից բաժանեց:

—Ո՛հ, քննիր իմ, սիրելի. Ռուժա, ինչո՞ւ ինձանից ալսպէս շուտ բաժանուեցար, հեկեկում էր Լեպան՝ դէմքը ձեռքերով ծածկած:

—Լաց մի լինիր, Լեպա՛, ես թշնամուց նրանց վրէժը կ'լուծեմ, ասաց Իվօն և չարագուշակ, վրէժխնդուժեան ժպիտը փայլեց նրա դէմքին:

—Իվօ, իմ որդի, խօսեց Ջուրջան. ես թէ՛ և խօսք եմ տուել քեզ տալու իմ Լեպալին, սակայն չեմ տալ նրան, սիրելիս, մինչև քո հօր և իմ բարեկամի վրէժը չ'լուծես... և արտասուքները հոսեցին նրա մարած աչքերից:

—Իվօ, իմ թանկագին փեսացու, բացականչեց Լեպան. ես քեզ չեմ պատկանիլ, մինչև դու իմ և քո սիրելի քրոջ և հօրդ վրէժը չ'լուծես... Թող չեմ տալ գրկելու, համբուրելու ինձ, մինչև չ'խոստանաս ազատել թշնամու ձեռքից թէ՛ քեզ և թէ՛ քո եղբայրներիդ...

Իվօն բռնեց նրա ձեռքից:

—Լեպա՛, ջերմագին կերպով արտասանեց նա. դու ճշմարիտ սերբուհի ես. ես քեզ սիրում եմ կեանքիցս աւելի. ի՞նչ է իմ կեանքն առանց քեզ: Սակայն երգում եմ, որ քեզ իմը չեմ անուանի, մինչև չ'կործանուի թշնամին և սերբը չ'ազատուի նրա լճի տակից...

Նա մօտեցաւ ծերունուն:

—Օրհնիր ինձ, հայր, ասաց նա. քաջալերիր ինձ այն օրհնենքով, որը ես չ'ստացալ իմ սիրելի ծնողից:

Ծերունին օրհնեց նրան: Իվօն համբուրեց նրա ձեռքը:

—Աստուած հետդ, իմ հօգի, իմ կեանք, ասաց Լեպան և ընկաւ նրա կրծքին:

Նա համբուրեց իւր հարմանցուի ճակատը և ազատուելով նրա գրկից, շտապով գուրս գնաց:



II.

Թշնամին շարունակում էր խմել քրիստոնեաների արիւնը և զուարճանալ նրանց կրած տանջանքների տեսարաններով:

Իբրահիմ-փաշայի ամենամեծ զուարճութիւնը և նրա ամենասիրելի արտասանութիւնն էր. «ցցի՛ բարձրացնել այդ լակոտին»:

Եւ սերբն անտրտունջ խոնարհեցնում էր գլուխը ազալի առջև՝ սպասելով վրէժխնդրութեան յարմար ժամին, իսկ թշնամին այդ դալկադէմ, վշտահար մարդկանցը իւր ստրուկն համարելով, նրանց սրտի մէջ չէր նկատում վրէժխնդրութեան և ազատութեան այն ջերմ ցանկութիւնը:

Ամեն օր նա—Իբրահիմ-փաշան հրճուում էր մի ուրևէ դժբաղտի՝ ցցի վերայ կրած անտանելի տանջանքները տեսնելով. սակայն այդ նրան քիչ էր թւում:

Եւ ահա մի օր էլ նրա մօտ հաւաքուել էին մի քանի նրա նման բարբարոսներ, որոնք հրաւիրուած էին մի քանի տասնեակ «շների» տանջանքների և մահուան տեսարաներին նեկայ գտնուելու և զուարճանալու:

Ի՞նչ էին անում այդ ժամանակ սերբերը... Իրանց անգորութեան ցաւալի խոստովանութեամբ՝ նրանք հեռու էին փախչում դժբաղտ ազգակիցների այդ զարհուրելի գէրեցմաններից...

Երեսուն ցցեր էին տնկուած հրապարակի վերայ, գոհերն արդէն բերուած էին և Իբրահիմ-աղան վագրի նենգամիտ հայեացքով դիտում էր, թէ ի՞նչպէս էին դողում և գունատուում նրանք՝ իրանց համար պատրաստուած ցցերի առջև—և սատանայական քրքիճով ծիծաղում էր:

Վայրենի գազանի մի նշանով՝ այն բոլոր դժբաղտներին դրին ցցերի վերայ:

Օղբ լցուեց նահատակների աղեկտուր հառաչանքներով. նրանց դէմքերը խեղաթիւրուում էին անբացատրելի ցաւից և մի այնպի-

սի զարհուրելի արտայայտութիւն ստանում, որ մինչև անգամ թշնամին էլ էր երես դարձնում...

Ամբոխն սկսեց ցրուել:

Յանկարծ նրանց միջից մի մարդ առաջ եկաւ. նրա աչքերը շրջում էին մի ցցից դէպի միւսը. ահա նրանք կանգ առան մի ծերունու վերայ և նրա գունատ դէմքն աւելի ևս փոխուեցաւ:

— Արդէն ուշ է... ուշ... ցած ձայնով ասաց նա իրան ուղեկցող ընկերոջը, բարկութեամբ սեղմելով հաստ վերարկուի տակ պահած դանակը:


— Նրանք երկուսն էլ ցցի վերայ են, ասաց նրա ընկերը և սարսափից դողաց:

Յցի վերայ բարձրացրած ծերունին տեսաւ Իփօլին (այդ նա էր), մեկնեց ձեռքը դէպի Իբրահիմը, աչքերը վեր բարձրացրեց և ցաւալի հառաչանքով աւանդեց հոգին:

— Սուրբ վրէժխնդրութիւն... բացականչեցին երկու սերբերը և հանելով դանակներն ընկան ամբոխի մէջ:

Իբրահիմը ցատկեց տեղից և կանչելով իւր ծառաներին, հրամայեց իսկոյնէն թ բռնել այն լանդուզն սերբերին, որոնք համարձակուել էին վրդովել նրա հանգստութիւնը:

Մի ըրպէս ղաւազներն ընկան այս և այն կողմը կատարելու աղալի հրամանը, սակայն այն երկու անյայտ մարդկանց հետքն էլ չէր երևում:



III.

Մտտ ժամանակ էր անցել այն օրուանից, իսկ թշնամին դեռ շարունակում էր իւր բարբարոսութիւնը և զոհը գնում էր զոհի լեռնից:

Սուրբման-փաշան այդ անում էր, որպէսզի սերբերի մէջ ընդ միշտ հաստատուի այն համոզմունքը, թէ թշնամու լաւիտենական տիրապետութիւնը և սերբի մշտնջենական ստրկութիւնը վաղուց արդէն գրուած են «ձապատագրերի» մատեանում:

Եւ ուրիշ ինչ կարող էին մտածել սերբերը, երբ նրանց ամեն մի համարձակ հայացքն ու ուրախ դէմքը իրանց կեանքով էին գնահատուում, երբ ոչ ոք չէր արգելում թշնամուն խեղդել մինչև անգամ անմեղ ծծի երեխաներին, որպէսզի նրանք՝ մօր կաթի հետ միասին չ'ծծեն թշնամու դէմ վրէժխնդրութեան

վնասաբեր ցանկութիւնը: Նա, որպէս ողորմելի վախկոտ, դողում էր դեռ մօր արգանդում գտնուած անմեղ երեխայից, սարսափում՝ մտածելով, որ այդ արարածը մի օր կարող էր հաշիւ պահանջել նրանից և վրիժառու հանդիսանալ իւր հօր և մօր կրած տանջանքներին:

Եւ թշնամին անգթաբար սպանում էր երեխաներին ու ցեխի մէջ թաղում այն ամենը, ինչ ոչ սերբի համար սուրբ էր և անգնահատելի -- օրէնք, հաւատ, պատիւ...

Սակայն արիւնահեղ խաղը վերջապէս լրցրեց համբերութեան չափն ու սահմանը. անարգութեան և ստրկութեան ծանրութիւնից լուզուեց սերբի հոգին և նա վճռեց փորձել իւր կիսաբէկ ուժերը, լուսալով կատարի կռուի մէջ փշրել իւր ծանր շղթաները:

Յալտնուեց մի առաջնորդ (այդպիսիներ ժամանակ առ ժամանակ յայտնուում էին, թէև կեանքը ամենքի համար խաղալիք էր դարձած), որին սերբերը յանձնեցին ամեն պատրաստութիւններ տեսնելու և նրա շնորհօք ժողովրդի ուժը ջարդեց իրան ճնշող շղթաները:

Սերբերի մէջ գտնուեցան շատերը, որոնց համբերութիւնն այլ ևս չէր բաւականանում տանելու այն ստորութիւնները: Նրանք քաշուեցան անմատչելի ժայռերն ու նեղ ձորերը՝ իրանց սպանուած եղբայրների, հայրենիքի և իրանց սեփհական վրէժը լուծելու:

Նւ ահա կենդանացան լեռները, բարձրաձայն կանչեցին թռչունները, քաղցրաձայն երգեց սոխակը և սերբի սիրտն ու հոգին լցուեց նոր յոյսով...

Անտառների մէջ և լեռնային անցքերում երևացին ստուերներ, աչքի այն երևոյթների նման, որոնց մարդս թէև տեսնում է, բայց շօշափել նրանց, կամ լսել նրանց շշուկը—նա անկարող է: Այդ ստուերները ոտից մինչև գլուխ սպառազինուած էին: Նրանք երբեմն երևում էին, երբեմն նորից անհետանում:

Սուրբ նպատակը քաջալերում հոգի ու սիրտ էր տալիս նրանց: Նրանք իրանց հայրեացքներն իրաւացի արհամարանքով ուղղեցին դէպի տաճիկների բունը—Բէլգրատ:

Այդ ստուերները տեսնելիս՝ դողում էր

թշնամին, իսկ սերբն ուրախանում, որովհետև նա լաւ գիտէր, թէ սովքեր են այն ստուերները:

Այժմ տաճիկ մայրերին հասաւ հերթը ողբալու իրանց որդւոց գլուխը, որոնք անտեսանելի կերպով կորչում էին մինը միւսի լեռեից՝ կարծես ժանտախտ ընկած լինէր միջները: Իսկ սրբան սերբ կանանց ու տղամարդկանց կեանք փրկեցին այդ ստուերները... Ո՛րքան երեխաներ խլեցին նրանք թշնամու ձեռքից...

Մի անուշ մանաւանդ վրգովում էր թըշնամու քունն ու դադարումը և սարսափով լցնում նրա սիրտը. այդ անուշը հարամբաշի*) Իվոյինն էր...

Տաճիկները փորձեցին ցրուել այդ ստուերները, սակայն բոլորովին անձանօթ լինելով Սերբիայի լեռերի խրամատներին և խորթաբուլթներին, նրանք չ'հասան իրանց նպատակին և նրանց մեծամասնութիւնը կորաւ ձորերի ու անդունդների մէջ:

*) Հարամբաշի—աւաղակապետ:

Անշօք բարկութիւնը տիրեց թշնամուն. նա այդ բարկութիւնը թափում էր անմեղ երեխաների և թույլ ծերունիների գլխին:

Մի լեռան բարձրութեան վերայ, անտառի սահմանագծի մօտ, քարի վերայ նստած էր մի մարդ՝ փաթաթուած հասա վերարկուի մէջ, որի տակից նշմարուում էին նրա գէնքերը: Այդ մարդը նայում էր ներքև՝ ճանապարհին և մօտակայ գիւղին, որը տաճիկների ձեռքով այրուել, աւերակ էր դարձել— և նրա աչքերը փայլում էին բարկութեան բոցով:

Նա շուսցրեց մի քանի անգամ, բայց պատասխան չ'ստանալով, արագութեամբ բարձրացաւ տեղից և մտաւ անտառ. երբեմն կորչելով հաստաբուն կաղնիների լետևը, երբեմն նորից երևալով նրանց մէջ՝ առաջ էր գնում. նա պատրաստուում էր մի անգամ էլ շուսցնել, բայց տեսնելով քարի վերայ նստած մի մարդու, մօտեցաւ և կանգնեց նրա մօտ:

Քարի վերայ նստողը չ'նկատեց նրա ներկայութիւնը. նրա մտքերն զբաղուած էին մի ինչոր բանով. գետնին խոնարհեցրած աչքե-

րը, որոնք սաստիկ վիշտ էին արտայայտում, կարծես նրանից մխիթարութիւն սպասում լինէին: Նրան մօտեցող մարդը, բոտ երևոյթին, չէր կամենում խանգարել նրա մտածմունքը, սակայն մի քար նրա ոտքի տակից լանկարծակի դուրս պրծնելով, ներքև գլորուեց և այդպիսով մատնեց նրա ներկայութիւնը: Նստողն արագութեամբ հանեց դանակը, բայց ճանաչելով իւր ընկերոջը՝ ասաց միայն.

— Նոր բան կ'էջ, Օբրտգ:

— Ոչինչ չ'կայ, հարամբաշի:

— Յովօն վերադարձաւ:

— Աերադարձաւ, բայց ոչինչ չէր գտել:

Իվօն (այդ նա էր) լուռ բարձրացաւ տեղից. նրա վերարկուի սակ փայլում էին գէնքերը: Փաթաթուելով վերարկուի մէջ, նա առաջ գնաց. նրա լետևից գնում էր Օբրտգը: Երբ նրանք հասան մի քարայրի անցքին, Իվօն աւելի ևս տխրեց. միշտ գաղտագողի մնալու կարևորութիւնը վիրաւորում էր նրա հպարտ սիրտը. նա լուռ մտաւ քարայրը: Այնտեղ՝ վառուած խարոյկի շուրջը նստոտած էին մօտ

քսան հոգի զանազան դէմքերի, հասակի և հազստի մարդիկ: Իվօյի ներս մտնելուն պէս՝ բոլորն էլ ոտքի կանգնեցան. նրանք Իվօյին իրանց գլուխն էին համարում, որովհետև բազմաթիւ դէպքերում նա արգէն ցոյց էր տուել իւր արիութիւնն ու հաստատ կամքը:

— Օհանն ալտեղ չէ, հարցրեց Իվօն, դիտելով ամենքին:

— Ո՛չ, հարամբաշի, պատասխանեց մարդկային մի հսկայ կերպարանք:

Իվօն մօտեցաւ կրակին, փռեց նրա առաջ իւր վերարկուն և պարկեց՝ աչքերն յառելով կրակի բոցերին: Այսպէս երկալ պարկած էր նա՝ խորատուզուած իւր մտքերի մէջ և գլուխը վերարկուի մէջ փաթած, որպէս թէ կամենում էր թագցնել շրջապատողներից իւր գազանի մտքերի արտայայտութիւնները:

Խարոյկի հանգչող կրակը աղօտ լոյսով լուսաւորում էր մօտակալ այրուած գիւղը, որը մի քանի օր առաջ այնքան քրիստոնեաների սպանդարան էր եղած...

Իվօն մտածում էր հօր, Լեպայի... մա-

սին...

Նա ոչինչ չէր ասել ընկերներին իւր հարանացուի մասին և, թէև յաճախ նրա ձայնն ու դէմքը մատնում էին նրան, սակայն նրանցից ոչ ոք չէր հարցնում նրան՝ կամ չ՛համարձակուելով այդ անելու և կամ յարգելով նրա վիշտն ու սիրահարական արկածները... Նրանք ամենայն ակնածութեամբ յարգում էին այդ մարդուն, որն արհամարելով իւր կեանքն ու երջանկութիւնը՝ եկել էր կռուելու այս լեռների և ձորերի մէջ:

Նրա ընկերներից մինը Նանկօն գիտէր, թէ սրտեղ էր անյայտանում երբեմնակի իրանց հարամբաշին և թէ ինչո՞ւ էր ժամանակ առ ժամանակ հեռանում նա իւր ընկերներից. բայց սա էլ էր լուում այդ մասին...

Ոչ մի շշուկ չէր լուում քարայրի մէջ. միայն քամին երբեմնակի ծածանում էր խարոյկի բոցը: Երևում էր, որ հարամբաշին կամ քնած էր և կամ ամբողջովին անձնատուր եղած իւր մտքերին:

Յանկարծ բոլորն էլ գլուխները դարձրին

գէպի քարայրի մուտքը. միժուժեան միջից առաջ եկաւ մի մարդկային կերպարանք՝ գունատ և անհաճելի գէմքով: Անցնելով բոլոր նստողներին մօտից՝ նա նստեց քարայրի մի անկիւնում:

— Քանի՞ հոգի են նրանք, ուրախութեամբ հարցրեց նստողներից մինը:

— Տասը հոգի կ'լինին: Եանկ՛, իսկոյն իմաց առւր Բվօյին, որ նրանց օգնութիւն է հարկաւոր հասցնել:

Եանկօն մօտեցաւ Բվօյին:

— Եղբայր Բվօ, բացականչեց նա ցած ձայնով:

Բվօն վեր թռաւ, դէն գցեց վերարկուն գլխից և բարկութեամբ նայեց Եանկօյին: Նրա քնհատութիւնից կարմրած աչքերը լանդիմանութեամբ լցուած էին դէպի իրան զարթնեցնող Եանկօն:

— Տասնաչափ զուազներ սարի լանջով գնում են դէպի գիւղ. պէտք է կտրել նրանց ճանապարհը:

Բվօն շտապով կանգնեց. նրա գէմքի վե-

րայ երևաց մի դառն ժպիտ:

— Ի՛նչ, սիրելիս, ասաց նա Եանկօյին. կոյն այստեղ, իսկ ես կ'գնամ նրանց դէմ:

Նա նշան արաւ իւր քաջերին, որոնք ճարպիկութեամբ առաջ եկան, վերցնելով իրանց դանակներն ու երկար հրացանները:

Բվօն ջոկեց նրանցից առաին և լրաբերի առաջնորդութեամբ գուբս գնաց նրանց հետ քարայրից:

— Եանկ՛, խօսեց մնացած հարուկներից*) մինը. ինչո՛ւ հարամբաշին մեզ հետք չբտարաւ:

— Կարծես մենք կինարմատ ենք, կամ մահից ենք վախենում. տրամութեամբ աւերացրեց երկրորդը:

— Հարամբաշին կամենում էր ձեզ հանգիստ թողնել. դուք շատ ժամանակ չէ որ գոգծի էիք, պատասխանեց Եանկօն:

— Չ'գիտես արգեօք, Եանկ՛, հարցրեց հարուկներից մինը, թէ ինչո՛ւ է մեր հարամբաշին այդքան տխուր ու մտախոհ. ինչո՛ւ է նա

*) Հարուկ — կամուրջ գիւղացի:

լաճախ հեռանում մեզանից կամ ինչ բանի վերայ է մտածում: Նրա դէմքն այնքան տխուր է, որ կարծես մի անտանելի վիշտ ունի:

—Մօտ ժամանակներումս, խօսեց մի ուրիշ հայրուկ, ես նրան տեսայ բարձր ժայռի վերայ նստած՝ հազիւ կարողացայ ճանաչել: Չարմանալի մարդ է նա— կռուելու՝ խելագարի նման է վազում, բոլոր կռիւներում նա առաջինն է, անհամար թշնամիներ ընկնում են նրա ձեռքից, դանակը խաղում է նրա ձեռքում, որպէս գրիչ. կռուի մէջ նրա դէմքը կենդանութիւն է ստանում, մարդ կ'զարհուրի, եթէ նրան նայէ: Իսկ երբ միայնակ է մնում, նրա ձայնը դուրս չի գալիս, աչքերը վշտից և հոգատարութիւնից մարում են... Ինչ է նշանակում այս ամենը, Եանկօն:

—Նա ձեզ վերայ է մտածում, ճնշուող եզբայրների վիճակն է նրան տխրեցնողը, պատասխանեց Եանկօն:

—Իհարկէ հեշտ չէ այսպիսի մի մեծ գործ իւր խղճի վերայ առնել, խօսեց մի նորը, և առաջնորդել մարդկանց դէպի մահ. բայց

խօս միւլենոյն է. թշնամին անասունների նման մեզ մորթուում է և ցցերի վերայ մեզանից մեռնողներն աւելի շատ են, քան մեր այս կռիւներում... Ինձ թւում է, թէ նա դեռ մտածում է իւր քրոջ կամ գուցէ և նշանածի վերայ...:

—Կարելի է... մտախոհ պատասխանեց Եանկօն:

—Եւ իրաւունք ունի վերջինի մասին տխրելու, ասաց առաջին հայրուկը. մի անգամ ես տեսայ այդ գեղեցկուհուն, երբ Իվօլի հետ գնում էինք նրա ծերունի հօր մօտ:

Մինչդեռ սրանք այս խօսակցութեամբ էին զբաղուած՝ փոքրիկ զօրախումբը կամաց կամաց իջնում էր թէք ժայռի վերայով՝ այնպէս ճարպիկութեամբ և անյսելի կերպով ցատկոտելով քարից քար՝ որ հազիւ թէ մի ոք կարողանար նկատել նրանց տիրող մթուածեան մէջ: Իջնելով տափարակութեան վերայ, Իվօն իւր խրմբին ճանապարհով առաջ տարաւ: Յետոյ դռնալով ընկերներին, նա նրանց պայմանական նշան արաւ և նրանք մի ակնթաթում աներևոյ-

Թացան՝ կարծես կորան գիշերային խաւարի մէջ:

—Մըշկա՛, ցած ձայնով ասաց Իվօն, գուկաց ինձ հետ:

—Պատրաստ եմ, հարամբաշի, պատասխանեց Մըշկան և այդ պատուօնն արժանանալու համար ուրախութիւնից բեխերը ոլորելով՝ աւելցրեց:

—Երևի այդ շները պատրաստուում են մեզ ճնշելու, բայց մենք դեռ շատ տաճիկ մայրեր պէտք է կսկծից մեռցնենք,

—Սրտ... Մըշկա՛:

Ճանապարհի վերայ լուսեցան երգի և երաժշտութեան ձայներ. Մըշկան կամենում էր չարձակուել երգող զաւազի վերայ և մաս-մաս անել նրան, սակայն չէր համարձակուում հակառակ Իվօնի կամքին գործել:

—Երգում եմ, հարամբաշի, որ այդ խմբի մէջ մեր եղբայրներից էլ կան... Նայիր, մինչև անգամ կանայք և երեխաներ են երեւում...

Իվօն տաճիկների մէջ նկատեց մի խումբ

կապկապած կանայք և տղամարդիկ, որոնք գրնում էին գոհուելու... Տիրադէմ; գլուխները խոնարհեցրած՝ առաջ էին գնում գերիները, ժամանակ առ ժամանակ արագացնելով քայլերը, երբ գգում էին մտրակի ծանր հարուածներ, որոնք չէին թույլ տալիս նրանց կանգ առնելու: Կիսամերկ, բոբիկ բոլորն էլ, թաթախուած թուղի և արեան մէջ, որը հոսում էր շարունակ սասցած վերքերից...

Մի գունատ աղջիկ, որը գնում էր մօր հետ միասին, վշտագին կերպով հառաչում էր և յաճախ աչքերը երկինք բարձրացնելով՝ յուսահատութեամբ շշնջում.

—Իվօ՛, եղբայր... ո՛ւր ես...

—Իվօ՛... գուրս թուաւ գերիներից մինի խորտակուած կրծքից:

—Ի՞նչ Իվօ՛, բզաւեց զաւազներից մինը և մի քանի հայհույանքներ արձակելով, այնպէս ուժգնութեամբ խփեց աղջկայ երեսին, որ նա ամբողջովին արիւնով ծածկուեց և մըտրակի նշանը մնաց նրա վերայ: Աղջիկը միայն ճչաց և ձայնը կտրեց:

Իվօն կճրտացրեց ատամները: Նա մեղմուլթեամբ շուռացրեց և կարծես գետնի տակից գուրս գալով, ընկերները շրջապատեցին նրան:

— Երբ ես ձեզ նշան կ'տամ, իսկոյն լարձակուեցէք նրանց վերայ, ասաց նա և քաշեց իւր հրացանի շնիկը: Միւս հայդուկները նրա լետեից արձակեցին իրանցը. գնդակներն իսկոյն լուեցոյին երգող տաճիկներին և նրանց ձայները հէնց կոկորդների մէջ մարեցրին: Ահարեկուած տաճիկները շփոթուեցան:

— Յարձակուեցէք այդ շների վերայ, կանչեց Իվօն և ինքը՝ մի ձեռքում հրացանը, իսկ միւսում եաթաղանը*) վազեց առաջ:

— Կանգնեցէք, տաճիկ լակոտներ, ձեր գէմ հարամբաշի Իվօն է, գոռաց նա և տեղնուտեղն սպանեց առաջին մօտեցող դաւազին:

— Իվօն... հարամբաշի Իվօն է... լսուեց ամեն կողմից:

Հայդուկները հրացաններից լսուեց միաձայն թնդիւն և լեռնային անցքը մաքրուե-

*) Եաթաղան — կեռ սուր:

ցաւ: Կենդանի մնացին ընդամենն երկու-երեք տաճիկ, որոնք, ճանաչելով Իվօյին, թողին գերիներին և շտապօք արձակելով հրացանները՝ սկսեցին փախչել:

Նրանց գնդակներն սպանեցին երկու երեխայի և վերաւորեցին հայդուկներից մինին:

— Ո՛չ մէկին կենդանի չ'կորցնէք, ձայնեց Իվօն. Մըշկա՛, հասիր այն լակոտին, որը ձիով է փախչում:

Մըշկան արձակեց հրացանը, փախչողի ձին մի քանի անկանոն քայլեր արաւ և իւր տիրոջ հետ միասին գլորուեցան անդուզի մէջ:

Հայդուկները քանդեցին գերիների կապերը, որոնք ծնկաչոք իրանց շնորհակալութիւններն էին տալիս նախ՝ Ատածուն, և ապա Իվօյին ու նրա ընկերներին: Բազմաթիւ օրհնէնքներ լսեց այստեղ Իվօն և նրա սիրտը լցուեց անսահման ուրախութեամբ...

Երբ բոլորին ազատեցին թոկերից, Իվօն ասաց Մարկուին և Օբրադին, որ նրանց հասցնեն մինչև գիւղ:

Տաճիկների գիտկները լցնելով անդունդի մէջ, նրանք վերադարձան թողելու իրանց սպանուածներին:

Ճանապարհին մի փոքրիկ մանուկ երևաց. Իվօն կանգ առաւ նրան սպասելու՝ կարծելով, որ նա մի գործ կ'ունենայ իւր հետ: Երկար քայլելուց՝ մանուկի գէմքը կարմրել էր. նրա հագստի վերայի փոշին ցոյց էր ապիս, որ նա շատ ճանապարհ էր կարել: Մօռենալով հայդուկներին, նա Իվօյին հարցրեց:

— Ե՛ս եմ Իվօն:

— Իվօ, հարամբաշի, ի սէր Աստուծոյ և այն ամենի, ինչ որ քեզ համար թանգ է, մի թողնիր իմ հօրս, լաց լինելով ասաց մանուկը. տաճիկները կամենում են սպանել նրան, աւելացրեց նա և բռնեց Իվօյի վերարկուից:

Իվօն ճանաչեց մանկանը և յօնքերը կիտելով՝ հարցրեց.

— Գու՛ Եանի որդի՛ն ես:

— Այո՛:

— Լա՛ւ, ասաց նա և դարձաւ Մրկշային. Մրկշա՛ն, մի քանի ընկերներով գնա՛ սրա հետ,

ես չեմ կարող գնալ:

— Ո՛չ, դո՛ւ, դո՛ւ ինքդ արի, արեւսում էր մանուկը. սփռչները չեն կամենալ նրան ազատել, բացի քեզանից: Տաճիկները հինգ հոգուց աւելի չեն: Գնանք, Իվօ, կամ դու...

Չարմանում էին հայդուկները Իվօյի վարանման վերայ. միշտ նա գնում էր հէնց առաջին կանչելով, իսկ այստեղ մերժում էր մանկան ջերմ խնդիրը:


Իվօն մտածում էր... Մի քանի լուպէից լետոյ բարձրացրեց նա գլուխը և խօսեց՝ կարծես ինքն իրան:

— Հին թշնամութիւն... Սակայն որտեղ որ կեանքը խաղալիք է դարձած, այնտեղ մահից երկնչելը մեղք է... Լա՛ւ, աւելացրեց նա, դառնալով մանկանը. ես կ'գամ: Գնա՛ և ասա՛ հօրդ, որ մենք կ'գանք նրա ալ ու հացին:

Եւ դառնալով ընկերներին, ասաց.

— Գնացէ՛ք և ասացէ՛ք Օհանին, որ ես գնում եմ գիւղ և երկու ընտիր հայդուկների ընկերակցութեամբ, նա գնաց երեխայի լետուից:

«Գոնէ Հարսնացուիս կ'տեսնեմ», մտածեց
Իվօն և այս միտքը մոռացնել տուեց մօտա-
լուտ վտանգի բոլոր անախորժ կասկածները...



IV.

Թշնամին վերջապէս սկսեց երկիւղ կրել
այդ ստուերներից, նամանաւանդ նրանց ա-
ռաջնորդից:

Իբրահիմ-աղան հրաման արձակեց բռնել
և իրան ներկայացնել Իվօյին, սակայն այդ
նպատակով ուղարկուած բազմաթիւ զաւազ-
ներից վերադառնում էին միայն երկու-երեքը,
իսկ մնացածները կուլ էին գնում ահօւլի ան-
դունդներին:

Սերբը գլուխը կախած շարունակում էր
իւր վրէժխնդուժիւնը:

Սյդ ժամանակ ինքը—Իբրահիմ-աղան ոտքի
ելաւ: Վեր առնելով իւր հետ հարիւր զաւազ՝
նա ուղևորուեց Սհանու գիւղը, իւր հին ծա-
նօթ յոյն Եանի մօտ:

Արդեօք նա իբրև իւր հին ծանօթի մօտ-
եկաւ, թէ նրա նպատակներն ուրիշ էին...

Թէև Իբրահիմը գեռ ոչինչ չէր խօսել, սակայն Եանը իսկույն նկատեց, թէ ինչպիսի աչքով է նայում նա իւր դստերը. բայց ինչ որ կարելի է ասել բարեկամին, Իբրահիմ-աղային տսելն անկարելի էր:

Եւ որքան գեղեցիկ էր երևում այդ նորատի հեյլենուհին իւր ազգային հագասի մէջ, երբ իրանց տան շէմքում կանգնած վստահ ժպիտով ողջունում էր Իբրահիմին. սակայն այս անգամ վերջինս աչքերի ծայրով միայն նայեց նրան և մտաւ տուն:

Ինչո՞ւ էր արգեօք գեղեցկուհին այդքան սիրով վերաբերում Իբրահիմին. նրան հաճեւի՞ էին թուում տաճկի շողոքորթութիւնները, թէ՛ նա փափագում էր ստանալ նրանից փառք և հարստութիւն — այդ միայն նրան էր լայտնի. սակայն նրա վարմունքից կարելի էր եզրակացնել, որ նա կատարում էր Իբրահիմի բոլոր հաճույքները՝ լոկ իւր հօր կեանքն ազահովելու համար — մի մարդու, որի գլուխը մի բողբոջում Իբրահիմը կարող էր բաժանել մարմնից:

Ահա թէ ինչո՞ւ էր նա նստել Իբրահիմի ստների մօտ և խաղում ծխի թանձր շերտերի հետ, որոնք դուրս էին գալիս նրա ծխամործից: Նայելով այդ գեղեցիկ արարածի վերայ, աղայի դաժան գէմքը հետզհետէ զուարթանում էր, սիրտն արագութեամբ էր բաբախում... Նա հրամայեց նրան իւր կշտին նստել և սկսեց շոյել նրա փափուկ հիւսերը, յետոյ համբուրեց գեղեցկուհու ճակատը և նրա կրծքից լանկարծ մի հառաչանք դուրս թռաւ — ի՞նչ էր այս... Արգեօք իւր՝ մօտ ժամանակներում կորցրած դստերն ինչեց նա, որին այնքան նման էր հեյլենուհին: Տխրութիւնը նսեմացրեց նրա գէմքը և նա կարծես ծխի թանձրութեան մէջ կամենում էր խեղդել այն վիշտը, որը տիրել էր նրա սրտին:

— Աղջիկ, կանչիր հօրդ, ասաց նա:

Աղջիկը դուրս գնաց և քիչ լետոյ վերադարձաւ հօր հետ միասին:

— Արգեօք ամեն ինչ պատրաստել ես այդ լակոտների համար, հարցրեց նրան Իբրահիմը:

Հարմնացու

— Ամեն ինչ, տէր իմ. ես ինքս հրաւիրեցի նրան ինձ մօտ և նա այժմ պահուած է մի տան մէջ, պատասխանեց Եանը, խոնարհութեամբ գլուխ տալով նրան:

— Աւթը դաւազ բաւական է:

— Բաւական է, բայց նախ պէտք է տեղեկանալ, թէ արդեօք քնեցի՞ն նրանք և այն ժամանակ...

— Արպէսզի մի որեւէ վտանգ չ'պատահի մեզ, այժմ, դու արդէն լաւ գիտես, թէ ինչպէս պէտք է վարուել: Լսում ես, Օսման, դարձաւ ազան ներս կանչուած դաւազին. ես կամենում եմ, որ նրան կենդանի ներկայացնէք ինձ, եթէ ոչ... — և նա ձեռքով ցոյց տուեց սուրբ:

Դաւազը խոնարհութեամբ գլուխ առեց և դուրս գնաց սենեակից: Եանն էլ կամենում էր հետևել Օսմանին, սակայն Իբրահիմը կանգնեցրեց նրան:

— Ի՞նչպէս որսացիր դու այդ լուկոտին, հարցրեց նա:

— «Ազնիւ» խօսք տալով, հրաւիրեցի

նրան... Ասացի, որ տաճիկները վրայ են տուել ինձ և խնդրեցի նրան օգնութեան. նա հաւատաց և...:

— Եւ եկաւ:

— Նրան խաբեց իմ «ազնիւ» խօսքն ու բերեց այստեղ:

— Եւ դու կ'դրժես այդ ազնիւ խօսքիդ:

— Ա՛յ թէ ետ... այլ որդիս...

— Լաւ, լաւ, միայն տես, որ նրան կենդանի բռնեն:

Եանը դուրս գնաց:

Օսմանն առնելով իւր հետ աւթը դաւազ, Եանի ուղեկցութեամբ մտաւ գիւղի մութ փողոցները:

— Մէկդ միւսի յետեւից մտէք ներս, ասաց Եանը, ցոյց տալով Օսմանին մթութեան մէջ մի հին, աւերուած խրճիթ:

Արպէս որսի սպասող արիւնարբու գայլեր՝ տաճիկներն զգուշութեամբ մօտեցան խրճիթի լուսամուտին, որտեղից ձայներ էին լսոււմ:

— Աւրեմն դու կամենում ես, որ մենք լուսագիմին այստեղից դուրս գանք, աս-

սոււմ էր Իվօն:

— Ինչ ալդպէս ասաց հայրս...

— Լաւ, ինչ որ լինելու է՝ կ'լինի, ասաց Իվօն, սլարկելով կրակի մօտ, իսկ նրա կողքին պարկեցան նրա երկու ընկերները, որոնք դետելով խրճիթը, համոզուել էին, որ ոչ մի գարան չ'կալ սարքած:

— Ե՛լ, գու, աղայ, գուները պինդ փակէր և մարիք կրակը, ասաց Իվօն և կարծեա հաւատ չ'ընծայելով մանկանը, ինքը բարձրացաւ գուռը փակելու:

Ալդ միջոցին գրասու՛մ Օամանը շշնջում էր Եանի ախանջին.

— Գնանք...

— Ա՛յ, գեռ շուտ է. երբ ժամանակը հասնի, որդիս ինքը գուռը կ'բանայ:

Քառորդ ժամ չ'անցած՝ գռան առաջ երևաց մանուկը և նշան արաւ հօրը, սա Օամանին և բոլորը կամացուկ մտան խրճիթ:

Իվօն մեռածի նման քնած էր. նրա ընկերներն էլ նոյն դրու՛թեան մէջ էին. լոգնածու՛թիւնը լալժահարել էր նրանց: Սակայն

չ'նայելով ալդ բանին, ոչ սք չէր համարձակուում մօտենալ Իվօյին: Օամանը մի անգամից կարող էր նրանց երեքին էլ տեղնուտեղն սպանել, սակայն Իբրահիմիցն էր վախենում:

Ղաւազներից մինը սիրտ արաւ, մօտեցաւ Իվօյին և երկաթեալ վնդոցը գցեց նրա վիզը. նոյնը արին և նրա ընկերներին: Մի զաւառ անգգուշաբար քաշելով Իվօյի վզնոցը, զարժնեցրեց նրան:

Մի վարկեան նայելով շուրջը, Իվօն վեր լծաւ, առաւ իւր մի գոլգ ատրճանակները երկու ձեռքում և մի անգամից արձակեց: Ղաւազն արիւնաշաղախ գետին գլորուեց: Մի քալլ լետ քաշուելով՝ Իվօն բացականչեց.

— Մասնու՛թիւն... Աւրեմն մեռի՛ր, մասնիչ, և նորից արձակեց: Եանն ընկաւ մեռած: Եսթաղանի հարուածների տակ փշրուեցան շղթաները և Իվօն ազատ էր: Այս ամենը մի րոպէի մէջ կատարուեցաւ: Ղաւազները մօտեցան Իվօյին, սակայն՝ տեսնելով նրա դանակի փայլը, նորից լետ նահանջեցին...

— Ա՛, լակոտ, գեռ կենդանի՛ ես լըտ-

ուեց Իբրահիմի ձայնը դրսից. նա սպասելուց ձանձրանալով, ինքն անձամբ եկել էր գործի ելքն իմանալու:

— Այստեղ ես դու, չարագործ, բացականչեց Իվօն և նրա աչքերը փայլեցին: Նա ձեռքում սեղմեց դանակը և վազեց դէպի Իբրահիմը: Ղաւազներն երկու կողմից ընկան նրա վերայ և գլորելով նրան, ծանր շղթաներով շղթալեցին:

Իբրահիմը, մօտենալով նրան, ոտքով խրփեց նրա գլխին. Իվօն կծրտացրեց ատամները. նրա ճակատի երակները կատաղութիւնից փրքուեցան և դէմքը զարհուրելի կերպարանք ստացաւ: Սակալն իգուր էր նա ճիգ թափում բարձրանալու— ծանր կապանքները նրան ուժաթափ արին և նա նորից ընկաւ:

Այդ դէպքից յետոյ Իբրահիմն ուղևորուեց իւր տեղը. Իվօն արդէն նրա ձեռքումն էր, նայնպէս էլ ոչ ոք այլևս չէր կարող նրան արգելք լինել՝ գեղեցիկ հեղեճուհուն իւր հարեմը ասնելու:

Ջուրջայի տան մօտով անցնելիս՝ Իվօն

ծանր հառաչեց և բացականչեց:

— Աստուած ձեզ հետ, հայր և սիրելի հարսնացու, մնաք բարեօր լուրիտեան:

Լեզան ճանաչեց Իվօյի ձայնը. նա վազեց գուրս և տեսնելով նրան տաճիկներից շրջապատուած, ցնցուեց... Բայց յանկարծ կարծեօ նրա սլփերը վերագարձան: Մի նոր՝ նրա սիրտը տիրող զգացմունքի ազդեցութեան տակ, նա մտաւ խրճիթը, հօր մօտ:

— Հայր, հայր, ասաց նա. տաճիկներն Իվօյին տարան:

— Իվօյին... ողջիկս, ի՞նչ ես ասում:

— Ա՛հ, հայր իմ, ես իմ աչքով տեսայ, թէ ինչպէս էին տանում նրան, և աղջկայ կրքից զուրս թուաւ երկիւղի ու վշտի մի ծանր հեծկլտանք... Բայց նա դեռ պէտք է ասլրի, այ՛ն, պէտք է ասլրի, այդ ինքն Աստուած էլ է կամենում:

— Աստուած էլ է կամենում... վշտահար կրկնեց ծերունին և կսկծից նրա սիրտը թուլացաւ:

— Հայր, Աստուած կ'օգնէ ինձ ազատե-

լու... Ես կամենում եմ այդ և հաւատացած եմ, որ ինձ կ'յաջողուի: Կամ կ'ազատեմ նրան և կամ ինքս էլ կ'մեռնեմ նրա հետ միասին:

Լեպպի աչքերն արտասովոր կերպով պտղազում էին. նրանց մէջ այնպիսի վստահութիւն և հաստատամտութիւն էին նկատուում, որ հայրը զարմացաւ:

— Դու, կասկածով հարցրեց նա:

— Ե՛ս, հայր, ներքի ինձ, որ մի երկուօրով պէտք է հեռանամ քեզանից... Իսկ եթէ քո դուստրն այլևս չ'վերադառնայ, դու այնտեղ կ'գտնես նրան... Լեպան աչքերը բարձրացրեց դէպի երկինք:

— Ի՞նչ ես վճռել անելու:

— Ազատել նրան կամ մեռնել նրա հետ միասին...

— Լեպա՛...

— Հայր, դու չես կարող ինձ արգելել այդ անելու. ես արդէն երեխայ չեմ— ես նրա հարսնացուն եմ: Նա ոչ ոք չունի այս աշխարհում. բոլորը թշնամին խլեց նրա ձեռքից. էլ ո՞վ

պէտք է հագ տանի նրա վերայ, եթէ ոչ նա, որը Աստուծոյ առաջ խոստացել է նրանը լինելու և որին նա երգուել է զոհել իւր կեանքը, խօսեց Լեպան և նրա դէմքը շառագունեց: Այն միտքը, թէ նա պէտք է զոհէ իւր կեանքը Իփօլին ազատելու համար, նրա սիրտը լցնում էր մի առանձին՝ մինչև այժմ նրան անձանօթ ոյժով և երջանկութեամբ:

— Մնաս բարե՛ւ, հայր, աւելացրեց նա և՛ կռանալով համբուրեց հօր ձեռքը: Յետոյ ազատուելով նրա գրկից, շտապով դուրս ելաւ խրճիթից և համարձակութեամբ քայլերն ուղղեց դէպի լեռները...

Թեք ժայռերի, խոր-խոր ձորերի և նեղ շաւիղների միջով առաջ էր գնում մի կինարմատ: Բարձրանալով լեռան գագաթը, նա քիչ կանգ առաւ հանգստանալու, ստիպին նայելով դէպի ներքև՝ տափարակութեան վերայ և կար-

ծես մի ինչ որ բան մտաբերելով, կրկնապատկած եռանդով նա առաջ գնաց:

Նկատելով իրան մօտեցող մի մարդու, նա դարձաւ նրան՝ ասելով.

—Օհանի ծանօթն եմ, տա՛ր ինձ նրա մօտ...

Մարդը զարմացմամբ նայեց նրան.

—Ի՞նչ ես անելու, հարցրեց նա:

—Գործ ունիմ նրա հետ, մի կարևոր լուր ունիմ հաղորդելու:

—Չլինի՞ մի փոսնդ է պատահել:

—Այո, շուտ արտ, պատասխանեց նա և առանց սպասելու այն մարդուն, շտապով սկսեց բարձրանալ վերև: Մարդն աշխատում էր հասնել նրա լեռեից: Հասնելով քարայրի մուտքին, վերջինս շուտացրեց և առաջ գնաց: Կինարմատը հետևեց նրան:

Նրանք մտան քարայրը: Օհանը մտախոհ նստած էր անկիւնում. նրա ընկերները շարուած էին կրակի շուրջը. տեսնելով կինարմատին, բոլորը ոտքի ելան:

Օհանը վեր թռաւ տեղից և զարմանքից

չկարողացաւ մի բառ անգամ արտասանել:

—Օհան... Իվօն արտեղ է, հարցրեց կինարմատը:

—Գնացել է մի ընտանիք ազատելու, պատասխանեց Օհանը. սակայն, Լեպոն, ինչը քեզ ստիպեց այստեղ գալու:

—Ազատելու... իսկ իրան մատնելու թըշնամու ձեռքը... Օհան, այսօր Իվօյին տաճիկները բռնեցին. Իբրահիմը տարաւ նրան երկու ընկերների հետ միասին:

—Այսօր... Իվօյն... Ի՞նչ ես ասում, Լեպոն, վախեցած ասաց Օհանը:

—Այո, այսօր. ես ինքս տեսայ, թէ ինչպէս էին տանում նրանց. սակայն, շտապիւր, մենք դեռ կարող ենք ազատել նրան. և նա իւր լեռեից քաշում էր Օհանին. նրա գեմքի վերայ երևում էին երկիւղ և անհամբերութիւն...

—Արեգակը մայր մտնելու վերայ է, իսկ մեր հարամբաշին դեռ չէ երևում, ասաց մի նոր մարդ, մտնելով քարայրը:

—Կամենում ենք գնալ նրա լեռեից,

ասաց Օհանը:

— Մի՛թէ մի վտանգ է պատահել, հարցրեց Մըշկան:


Բոլորը նայում էին Լեպալին, սակայն ոչ ոք չէր ճանաչում նրան, բացի Օհանից: Այժմ բոլորն էլ շշնջում էին. «Սա հարամբաշու հարսնացուն է. որքան գեղեցիկ է»:

— Այո՛, Մըշկան, պատասխանեց Օհանը. Իվօյին տաճիկները բռնել են:

— Տաճիկները... վախեցած բացականչեցին բոլորը. մահ՛ թշնամուն, կեցցէ՛ մեր հարամբաշին, հնչեց միաբերան նրանց ձայնը. նրանց աչքերը փալլում էին. նրանցից ամեն մինը սեղմեց դանակը ձեռքում և հրացանը կրծքին, որպէս մայրը սեղմում է կրծքին իւր որդուն. լսում էր ատամների կճրտոց:

Նրանք բոլորն էլ ուխտեցին մեռնել կամ Աստուծոյ օգնութեամբ ազատել Իվօյին. նայելով այդ զարհուրելի զէմքերին, Լեպան ամբողջ մարմնով դողաց. սակայն նրա սիրտը թնդում էր ուրախութիւնից, լսելով իւր սիրելու ընկերների բերանից նրանց սուրբ ուխտը.

նա հաւատացած էր, որ նրանք կամ կ'մեռնեն և կամ կ'ազատեն Իվօյին... Օհանն առաւ վերսրկուն ուսերին, բռնեց Լեպալի ձեռքից և դուրս ելաւ քարայրից. ամբողջ խումբը հետուեց նրանց. միայն երկու-երեք հայտուկ մնացին քարայրը պահպանելու համար:



V.

Լսելով, որ Իվօն բռնուած է, տաճիկներն ազատ շունչ քաշեցին: Իբրահիմը, կամենալով հաճուրանալ գօրեղ Սուլէյմանին, որն իբրև հաստատակամ ծառայող մեծ երկիւղ էր գցել նրա սիրտը, հրամայեց Իվօյին բանդ զընել սակայն, հակառակ սովորութեան, նա անյապաղ չ'կարգաց նրա դատավճիռը—նվ գիտէր, թէ ինչն...

Երբ Իվօյին Սուլէյմանի մօտ տարան, վերջինիս այնքան դիւր եկաւ նրա առույգ կազմուածքն ու կենդանի, համարձակ հայացքը, որ նա կանչեց Իբրահիմին և հրամայեց համոզել նրան մահմետականութիւն ընդունելու: Սակայն Իվօն արհամարանօք պատասխանեց, որ ոչ փառքը և ոչ հարստութիւնը չեն կարող ուրացնել տալ իւր հաւատը: Պատասխանը սաստիկ վիրաւորական լինելով, Սուլէյմանն իսկույն

ևեթ կարգաց Իվօյի մահուան վճիռը:

Արդէն երկու օր էր, որ Իվօն բանդումն էր: Շղթալակալ՝ պաղ քարի վերայ նստած, նա իրան գերեզմանի մէջ էր կարծում: Գետնափորի խաւարը, ցուրտն ու խոնուութիւնը թուլացնում էին նրա ոյժերը, իսկ կապանքների ահագին մեխերը լրացնում անիծուած բանդի դառն ներգործութեան պակասորդը:

Արդէն երկրորդ գիշերն էր, որ նա անքուն էր անցկացնում, երկրորդ անգամն էր լսում նա մօլլայի ձայնը, որ հրաւիրում էր ուղղափառներին առաւօտեան աղօթքի—և այդ զգուելի ձայնը լիշեցնում էր Իվօյին բուռ չարագուշակ՝ թուշուներէի քունը վրդովող աղաղակը: Մտածելով իւր հայրենակիցների դառն վիճակի վերայ, նա մոռանում էր սեփհական տանջանքները և նոր ոյժով վեր էր թուշում տեղից... Սակայն այդ ոյժը փշրուում էր կապանքների ծանրութեան տակ և նա ծանր հառաչելով՝ նորից նստում էր քարի վերայ:

Ոչ մի ձայն չէր լսում այնտեղ, բացի բանդի շուրջը պտտուող պահապանի դանդաղ

քալերից:

— Իբրահիմն այժմն էլ դեռ վախենում է ինձանից, դառն ժպիտով ասաց Իվօն. շուտով նա կ'սպանէ ինձ, բայց թնչ կ'լինի ինձանից լետու իմ աղաւնեակիս վիճակը... Առանց հրաժեշտի ուղջոյն տալու, թողի նրան...

Նա ծանր հառաչեց և խորատուկուեց իւր մտքերի մէջ — նա մտածում էր անցած օրերի, իւր սիրելու մասին...

Յանկարծ նա սթափուեց: Բանդի դռան բանալին պտտուեց, փականքը ձայնեց և գուռը ձուռալով բացուեցաւ:

— Իսկոյն ինձ պատժելու կ'տանին, մտածեց Իվօն և նրա սիրտը ճմլեց:

Պահապանը մօտեցաւ նրան և գուռս հանեց բանդից:

Թաղման զանգակի ձայնի նման՝ ճրնկճրնկում էին շղթաները գիշերուայ մթովթեան մէջ: Բանդի ելքի մօտ սպասում էին զաւագները: Իվօն նայեց նրանց և համարձակ մտաւ նրանց մէջ տեղը. զաւագները շրջապատեցին նրան չորս կողմից:

Իվօն հասկացաւ, որ իրան ուղիղ պատժելու են տանում. նրա հանդէպ արդէն կենդանացան զահիճը՝ արիւնտ սուրբ ձեռքին, ցիցը և Իբրահիմը, որ հրճում է նրա տանջանքները տեսնելով... Նրան թւում էր, թէ արդէն իրան ցցի են բարձրացնում... Նա ցրնցրուեց, շղթաները ձայնեցին գիշերալին լուսթեան մէջ: Փամանակ առ Փամանակ նրա հոգույ մէջ կենդանանում էին հօր և քրոջ սոսկալի ստուերները... Նա լսում էր նրանց վրէժխնդրութեան մասին արած աղերսանքներն ու մահուան շշուկները.

— Վրէժ... վրէժ...

Բայց այս ստուերներն էլ անհետացան մի ինչ որ խուարի մէջ: Իվօն բարձրացրեց ձեռքը, որոնելով զանակը, սակայն նրա մարմինը շրջապատող մեխերն զգացրին նրան՝ «դու գերի ես» — և ձեռքը թուլացած վայր ընկաւ...

Կանգնեցին. Իվօն գլուխը բարձրացրեց և իրան գտաւ պատժի տեղում. այստեղ էին նմանապէս նրա երկու ընկերները: Նա մօտեցաւ հրաժեշտի համբոյր տալու նրանց և համ-

բուրուելով՝ ասաց.

— Աստուած ձեզ հետ, Ջուրջն և Նանկօ,
դուք ճշմարիտ իւնակներ էք:

— Քաղցր է մեզ ազատութեան համար
մեռնել, ուրախութեամբ պատասխանեցին
նրանք:

Իվօյին հեռացրին նրանցից:

Ինչո՞ւ էին նրանց այսպէս վաղ պատժում,
եթէ թշնամին չէր վախենում նրանցից: Այդ
մասին Իբրահիմն ինքը լաւ գիտէր...

Իվօյի սիրտն անզգայացաւ, արիւնը սա-
ռեց երակների մէջ, երբ նկատեց գետնին
անկած երեք ցցեր... Նա մտաբերեց իւր պա-
տանեկութիւնը, հօրը, քրոջը, հարսնացուին...
և սաստիկ ցանկանում էր ազատ լինել, — գոնէ
մի րոպէ, յաւիտենական հրաժեշտի համբոյր
տալու վերջինին: Նրան թւում էր, թէ նա
տեսնում է իւր մօտ սիրուհուն, թէ սեղմում
է նրա ձեռքը... Շղթաները ձայնեցին, նա շուր-
ջը նայեց և իրան թշնամիներից շրջապատուած
տեսաւ: Նրա աչքերն այրում էին սոսկալի
կրակով, նա կճրտացրեց ատամները և երեսը

մի կողմ շրջեց, — նրանից ոչ հեռու կանգնած
էր Իբրահիմը՝ սատանայական ժպիտը դէմքին:

Իվօյին մօտեցրին ցցին. նա աչքերը բար-
ձրացրեց երկինք՝ կարծես հրաժեշտ էր տալիս
նրան: Նրանց մէջ արտասուքներ էին երևում,
որոնք զլորում էին ներքև:

Իբրահիմի մի նշանով դաւազները բռնե-
ցին նրա ընկերներին և գցեցին ցցերի վերայ:
Լսուեց մի սրտածմլիկ հառաչանք, լետոյ ամեն
ինչ լուեց: Ոչ մի գանգատ չ'լսուեց նրանց բե-
րանից: Նրանք աչքերն Իվօյին դարձրած, կարծես
ասելով՝ «Աստուած քեզ հետ, ընկեր՝» մեռան:

— Ահա այդպէս է մեռնում հայդուկը,
բացականչեց Իվօն և համարձակ նայեց իւր դա-
հիճների աչքերի մէջ. նա, որ սովորեցնում է
ուրիշներին մահն արհամարել, ինքը կարող է
հերոսաբար մեռնել:

Սակայն ինչո՞ւ մի անգամից չէր սպանում
նրան Իբրահիմը. արգեօք կամենում էր խլել
նրանից անվեհերութեան վերջին կայծը և չո-
րացնել նրան երկիւղից, թէ ընկերների մար-
տիրոսական մահուան տեսարաններով մեղմա-

ցնել այդ լանդուզն հայեացքը և նրանց երկիր-
զով թուլացնել առույգ կազմուածքը... Նա
սխալուում էր. ընկերներն արդէն Իվօլին ցույց
տուին, թէ ինչպէս պէտք է մեռնել—և նա
այնպիսի համարձակ հայեացքով էր նայում Եր-
բահիմին, որ կարծես կամենում էր գէթ այդ
հայեացքով սպանել նրան: Երբահիմը սարսա-
փում էր այդ հայեացքից և ամաչելով իւր
սեփհական թուլասրտութիւնից, կատաղու-
թեամբ բղաւեց.

—Մահ այդ շանը, գրէք գրան ցցի վե-
րայ:

Եւ երկու զուազ բարձրացրին Իվօլին
և...

Յանկարծ մի քանի հրացանների պայթիւն
չուուեց. գնդակներն սպանեցին Իվօլին բարձրա-
ցնող երկու զուազներին:

—Իվօ, կանչեց Օհանը, եղբայրներդ են...
Իվօ...

Քսան հատ դանակ փայլեցին հայրուկնե-
րի ձեռքում. զուազներն ընկնում էին մինը
միւսի լետեից. այդ խառնաշփոթութեան ժա-

մանակ Երբահիմը գլուխն ազատեց փախչելով.
Իվօն ազատ էր: Մի պատանի մօտեցաւ նրան,
ջարդեց նրա շղթաների փականքները և տու-
եց նրան դանակ և ատրճանակ:

Իվօն ճանաչեց իւր հարսնացուին՝ աղա-
մարդու շորեր հագած և մոռանալով կրած
բոլոր նեղութիւնները, ջերմութեամբ սեղմեց
նրան իւր կրծքին: Բայց Լեպան ազատուելով
իւր սիրելու գրկից՝ կանչեց.

—Յառաջ...



V I.

Ծանր տանջանքներով թունաւորուում էր սերբերի կեանքը. նրանց մէջ մի հմուտ և քաջ զօրագլխի կարիք էր զգացուում: Սակայն գտնուեցաւ մի մարդ, որը՝ կարծես ժողովրդին վերջնականապէս կործանելու համար՝ ապստամբեցրեց նրան տաճկի դէմ այն ժամանակ, երբ նա դեռ ևս անպատրաստ էր կատաղի և արինահեղ կռուի:

Հաջի-Փրոգանը ժողովրդին առաջնորդ հանդիսացաւ, սակայն նրա՝ ժողովրդին ազատելու փորձը միայն գրգռեց թշնամուն, ուստի և նա վճռեց սպանել ժողովրդի մէջ նրա ազատութեան գաղափարը, որպէսզի՝ բացի օսմանեան փաղիշահից, ուրիշ մի որևէ տէր ունենալու ցանկութիւնը անհետանալ նրանց սրտից:

Սկսուեցան ահագին թուով մարդկանց սպանութիւնները, յոշոտումներն ու տանջանք-

ները: Թշնամին կամենում էր թափել այդ ստրուկների բոլոր առամները, որպէսզի նրանց կողմից այլ ևս երկիւղ չ'ունենայ: Եթէ չ'լինէր նրանց միակ հերոս պաշտպանը—հարամբաշի Իփօն, անթիւ մայրեր կ'զրկուէին իրանց որդւոցից. միայն նա էր, որ փրկում էր հարիւրաւոր զժբաղտների կեանք:

Նրա մի հատիկ խօսքն ընդունուում էր, որպէս հաշտութեան գրաւական Սուլէյմանի մօտ, սակայն նա լաճախ դժբում էր իւր այդ խօսքին: Նա դեռ հարկադրուած էր խոնարհուիլ զօրութեան առջև, սակայն նրա սրտի միակ բաղձանքը, նրա միակ միտքն ու նպատակն էր ազատութիւնը...

Այն՝ ինչ որ դեռ անխախտ մնում էին սերբերի ձեռքում, տեղ-տեղ՝ լեռների մէջ պահուած վանքերն էին, որտեղ նրանք կարող էին աղօթել Աստծուն, մխիթարութիւն գտնել իրանց վշտացած սրտերին այդ աղօթքի մէջ, իրանց հաւատն ու յօյսը զօրացնել առ Աստուած և Նրա ողորմութիւնը հայցել...

Գարաւոր լեռների և ժալօերի մէջ, ո-

րոնք կարծես պահպանում էին այդ տեղը թըշնամու ասպատակութիւնից, գտնուում էր մի մամռապատ վանք, որի հին դռները պարզ ապացոյց էին, թէ արդէն քանի դար նրա մէջ աղօթել էին սերբերը. նրա զմբէթի արձակած թույլ փայլը կարծես լիշեցնում էր մարդկանց իւր անյաղթելի զօրութիւնը:

Բաղմաթիւ ժողովուրդ էր հաւաքուել այդտեղ աղօթելու Աստծուն և զօրացնելու իւր հաւատն ու յոյսը. գլուխները խոնարհած՝ ակնածութեամբ ծուներ էին դնում մարդիկ Փրկչի առջև: Ալեգարդ քահանան աղօթք էր կարդում:

Փոքրիկ վանքի մի անկիւնում, հիւանդոտ ծերունու մօտ, որը նոյնպէս եկել էր զօրացնելու իւր հաւատն ու յոյսը, նստած էր մի գունատ, տխրադէմ և աչքի ընկնող գեղեցկութեան տէր աղջիկ: Նրա գէմքի վշտալի արտայայտութիւնը, աչքերում երբեմնակի երևացող փայլը, գեղեցիկ մետաքսաթել հիւսերը, որոնցից մի ալիքանման փունջ բաժանուելով՝ փռուած էր նրա ճակատի վերայ, -- այս ամե-

նը միասին մի այնպիսի ազդեցութիւն էին գործում նախդի վերայ, որ թուում էր, թէ ոչ ոք կեանքը չէր խնայիլ նրանից մի քաղցր հաւեացք ստանալու համար:

Փամերգութիւնը վերջացաւ: Ալեգարդ քահանան «հոգւոց» ասաց չարագործներից սպանուած եղբայրների համար. ժողովուրդը միաբերան կանչեց:

— Տէր ողորմեա...

Այդտեղ կանգնողները չ'մոռացան աղօթել անկիւնում նստած ծերունու և նրա դրստեր համար. վերջինս հարամբաշի Խվօյի հարսնացուն՝ Լեպան էր, որը բաղմաթիւ բարիք էր արել նրանց և շատերին ազատել մահից:

Յանկարծ բոլոր խոնարհած գլուխները բարձրացան, բոլորը ցնցուեցան և վախեցած վեր թռան տեղերից:

Շէմքում կանգնած էր բարկացած գէմքով, երկար, սև մօրուքով ու փայլուն աչքերով թշնամին:

Ամբոխի մէջ կալծակի արագութեամբ տարածուեցաւ.

— Իբրահիմն է...

Նա կանչեց իւր զաւագներին, ինքն առաջին անգամ թափեց մի ութսունամեայ ծերունու արիւնը և առաջ ընթացաւ:

— Օհօ, անհաւատարիմ շներ, ուրեմն այսպէս էք դուք ծառայում մեծ փառիշահին որոտաց նրա ձայնը:

Առաջին անգամն էր այդ փոքրիկ վանքը ողողում սերբի արիւնով: Ալեգարդ քահանան գունատուեց և դողդոջուն ձայնով երկարացրեց.

— Տէր, փրկի՛ր մեզ...

— Փրկի՛ր մեզ... ձայնակցեց ժողովուրդը նրա աղօթքին:

Իբրահիմը կարծես մի ինչ որ բան որոնելիս լինէր. լետոյ գնալով անկիւնը, կանգ առաւ ուղիղ Լեպալի առջև. նրա դէմքի գծերն ընդունեցին՝ զգուելի և հեշտասէր արտայայտութիւն. կրքոտ տաճիկը գուարճանում էր իւր նոր գիւտով: Նա կռացաւ դէպի Լեպան:

— Հեռու, անհաւատ, կանչեց Լեպան. հա-

րամբաշի Իվօլի հարսնացուն աւելի շուտ կեանքը կ'տայ, քան կ'թողնի անարգելու իրան:

Այդ անունը լսելով, Իբրահիմը լետ քաշուեցաւ: Լեպալի ձեռքում փայլեց դանակը. Իբրահիմը փորձեց գաղտագողի խլել այն:

— Հեռու, կրկնեց Լեպան՝ բարձրացնելով դանակը. այդ իսկ րուպէին՝ կայծակի արագութեամբ Իբրահիմը սուրն իջեցրեց: Լեպալի ձեռքը թուլացած վայր ընկաւ և արիւնը թափուեց լատակին՝ կտրուած հագստի տակից: Նա դանակն առաւ ձախու ձեռքը:

Այդ միջոցին դուրսն աղմուկ և խառնաշփոթութիւն տիրեց:

— Իվօն... հարամբաշի Իվօն... գոռում էին ամենքը:

Իբրահիմը դուրս փախաւ. հայրուկներն արդէն դուրս էին հանել բոլոր զաւագներին վանքից. լուռեց հրացանների որոտ և դանակների ձայն...

— Ալլահ, Ալլահ, խնայիր... կանչեց Իբրահիմը և փախաւ, մի քանի զաւագների հետ ազատուելով հայրուկների ձեռքից:

Ամեն ինչ լուեց. միայն տեղ-տեղ լսւում էին հառաչանք, շշուկ և կցկտուր խօսակցութիւն: Վանքը մտաւ մի մարդ՝ ամբողջովին արիւննաթաթախ. նրա հայեացքը հրամայողական էր և համարձակ:

Գա հարամբաշի Իվօն էր:

Ամբոխը հետևում էր նրան: Իվօն խաչակնքեց, կարգաց մի կարճ աղօթք, համբուրեց պատկերը, գանձանակի մէջ փող գցեց և գարձաւ քահանային.

— Օրհնիր, հայր, ասաց:

— Թող Աստուած քեզ օրհնէ, որդի:

Իվօն համբուրեց նրա աջը, լետոյ մօտենալով Լեպային, նրա մօտ չոքեց հիւանդոտ ծերունու առջև:

— Հայր, ասաց նա, օրհնիր մեզ:

— Երջանիկ եղէք, իմ որդիք, բացականչեց ծերունին՝ գրկելով նրանց երկուսին էլ:

Լեպան նայեց Իվօնին և նրա դէմքն աւելի ևս տխրեց:

— Իվօ, սկսեց նա. ես ուխտել եմ Աստուծոյ առաջ, որ քո կինդ լինիմ միայն այն ժա-

մանակ, երբ դու ազատ կ'լինիս և կ'ազատես քո եղբայրներդ: Մի ստիպիր ինձ դժբերուալդ սուրբ ուխտիս...

Իվօն բարձրացաւ տեղից, գնաց սեղանի մօտ, մեղմ աղօթք կարգաց և նորից մի քանի հատ փող գցելով գանձանակի մէջ, մօտեցաւ ծերունուն:

— Մնաք բարեալ, հայր և սիրելի հարսնացու, ասաց նա. նրա ձայնը դողում էր, կարծես մի ծանր քար կար սրտի վերայ. լաց մի լինիր, իմ ցանկալի, շարունակեց նա. Աստուծով մենք նորից կ'տեսնուինք, եթէ ոչ այս աշխարհում, գոնէ այնտեղ, նա ձեռքով ցոյց տուեց երկինքը:

— Իվօ... երգւում եմ Աստուծոյ անուամբ սիրել քեզ, քանի դեռ կենդանի եմ. իսկ եթէ դու մեռար... հեծկլտանքը խեղդեց նրա ձայնը. այնտեղ էլ, շարունակեց՝ բարձրացնելով աչքերը երկինք, կամենում եմ լինել հարամբաշի Իվօնի հարսնացուն:

— Մնաք բարեալ, ասաց Իվօն, և համբուրելով նրա ճակատն ու ծերունու ձեռքը, դուրս

գնաց վանքից:

—Աստուած հետդ, իմ Իվօ, բացականչեց
Լեպան և ընկնելով հօր մօտ ծնկների վերայ,
երկար ժամանակ ջերմեռանդութեամբ աղօ-
թում էր Աստծուն պահպանել նրան թշնա-
մու որոգայթներից...



VII.

Աստամբուլիւնը բռնկուեց:

Միլոշն առաջնորդում էր ժողովրդին, որն
ամեն կողմից խմբւում էր նրա մօտ՝ պատե-
րազմական ուրախ երգերով:

Փոխանակ նախկին՝ միայն հառաջանքնե-
րով ու հեծկլտանքով ընդմիջուող մեռելային
լուսթեան, այժմ ամեն կողմից հնչում էին այն
ուրախ զօրախմբերի երգերը; որոնք ընդ առաջ
էին գնացել իրանց նոր զօրագլխին և ողջու-
նում էին նրան, որպէս իրանց՝ դէպի արիւնա-
հեղ կռիւ առաջնորդող մի սուրբ էակի...

Իվօն էլ իւր ընկերների հետ դուրս եկաւ
նրան դիմաւորելու: Միլոշն արգէն վաղուց
լսել էր նրա մասին և նրան մի զօրախմբի
գլխաւոր կարգեց:

Ծերունի Զուրջան էլ էր կամենում մըտ-
նել կռուի մէջ, սակայն նրա թույլ ոյժերն ար-

գեղում էին նրան այդ անելու: Իսկ նրա գուստ-
բը՝ Լեպան Իվօյից բաժանուած օրից՝ միշտ
գունատ էր և տխուր:

Ծերունին նկատում էր այս և մի ան-
գամ էլ սասց նրան.

— Ինչու ես գու շարունակ տխուր. Իվօն
շուտով ազատ կ'լինի:

Լեպան ոչինչ չ'սպաստախանեց, այլ միայն
նայեց հօրը և գլուխը շարժեց. ծերունին հաս-
կացաւ նրա սիրտը կրծող վիշտը և այլևս ոչինչ
չ'ասելով, շուրջ նրա մետաքսանման մագերը:

Քիչ ժամանակ չէր անցել այդ օրուանից,
սակայն Լեպան հետզհետէ գունատուում էր և
նիհարում: Շատ շուտ-շուտ ծերունին Լե-
պայի աչքերում արտասուքներ էր նկատում, սա-
կայն լուծւում էր և չէր աշխատում մխիթարել
նրան. նոյն իսկ նրա բերանիցն էլ այլևս չէին
լուծւում ուրախացուցիչ խօսքեր, ժպիտ՝ զօռով
էր երևում նրա գէմքի վերայ. նա ինքն էլ մի
ինչ որ երկիւղ էր զգում ապագայի վերաբեր-
մամբ:

Զօրախմբերը վերադառնում էին կռուի

գաշտից: Միլոշի առաջնորդութեամբ սերբերն
լաղժող հանդիսացան, Սերբիան այնուհետև
անաս էր...

Ամեն կողմից լուծւում էին երգեր և զօրա-
խմբերն ուրախ-ուրախ անցնում էին մինը միւ-
սի լեռեից՝ Օհանու գիւղի միջով: Բոլորն ան-
ցան, իսկ Իվօն դեռ չէր երևում: Լեպան ի-
րանց պարտիզի դռնակի մօտ նստած՝ դիտում
էր առաջևից անցնող ուրախ զօրախմբերը՝ ի-
րանց տատանուող՝ գոյնզգոյն ծաղիկներով ու
ժապաւեններով զարդարուած գրոշակներով:

— Ս. իս, երբ կ'գալ արդեօք իմ Իվօն, հար-
ցնում էր նա ինքն իրան. սկզբում սրպիսի ու-
րախութիւն էր ցոլում նրա գէմքի վերայ, իսկ
այժմ միայն վիշտն էր ճմլում նրա սիրտը:

Վերջապէս, ահա հեռուից գալիս է մի
նոր զօրախումբ. փոշին նրանց լեռեից սիւներ
է կազմում. սակայն ինչպիսի լուսութիւն է տի-
րում այդ զօրախմբի մէջ... Մինչև անգամ լրս-
ւում են մարդկանց զէնքերի և ձիաների ոտ-
ների ձայնը: Նրանց մէջ չի երևում ո՛չ տերև,
ո՛չ ծաղիկ և ո՛չ էլ ուրիշ զարդարանքներ.
Հարնայու

նրանք բոլորն ընթանում են կորագլուխ, տխուր
տրտում...

Առաջևից գնում է մի ձիաւոր, ամբող-
ջովին սև հագած. նրա ձին էլ է սև քօղով
ծածկուած:

Մէջ տեղում՝ մերկ հրացանների վերայ
տանում են այդ զօրախմբի գլխաւորի գիակը:
Հասնելով Զուրջայի խրճիթին՝ զօրախումբը
կանգ առաւ: Լեպան ճանաչեց նրանց և շտա-
պօք վազելով նրանց առաջնորդի մօտ՝ հայ-
ցրեց.

— Ո՞ւր է Իվօն, սակայն տեսնելով հրա-
ցանների վերայ պարկեցրած գիակը, ճչաց և
անզգայ փռուեց գետնին...



* * *

Փոքրիկ վանքում, Փրկչական պատկերի
առջև, ծնկաչօք աղօթում էր մի վշտահար և
գունատ կինարմատ՝ ամբողջովին փաթաթուած
սև քօղի մէջ:

Իւր սեփհական մեղքերի՞ համար էր արդեօք
նա թողութիւն խնդրում Աստծուց, թէ՛ մի
ուրիշի համար էին աղօթք մրմնջում նրա շըր-
թունքները...

Ժողովուրդը նրան սուրբ էր համարում,
բոլորն էլ յարգում էին նրան: Սակայն նրան
տեսնելիս՝ ամենքի սիրտը լցում էր մի տեսակ
տխուր վշտով—անձնագոհ հարամբաշի Իվօի
մահուան վշտով:

Այդ կինարմատը հարամբաշի Իվօյի հարս-
նացուէն էր:



ՆՇԱՆՍԻՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Երէս	Տաշ	Սխալ	Ուղղելու
13	12 վեր.	դողդողջումը	դողդոջումը
20	5 ներ.	կ'լուծես	կ'լուծեմ
30	9 վեր.	լցուեց	լցուեցան
37	10 վեր.	Հարգուկներից	Հայգուկներից
»	ձան.մէջ	Հարգուկ	Հայգուկ
39	1 ներ.	ակնթաթում	ակնթարթում

TABLE OF CONTENTS

1	1	1	1
2	2	2	2
3	3	3	3
4	4	4	4
5	5	5	5
6	6	6	6
7	7	7	7
8	8	8	8
9	9	9	9
10	10	10	10
11	11	11	11
12	12	12	12
13	13	13	13
14	14	14	14
15	15	15	15
16	16	16	16
17	17	17	17
18	18	18	18
19	19	19	19
20	20	20	20
21	21	21	21
22	22	22	22
23	23	23	23
24	24	24	24
25	25	25	25
26	26	26	26
27	27	27	27
28	28	28	28
29	29	29	29
30	30	30	30
31	31	31	31
32	32	32	32
33	33	33	33
34	34	34	34
35	35	35	35
36	36	36	36
37	37	37	37
38	38	38	38
39	39	39	39
40	40	40	40
41	41	41	41
42	42	42	42
43	43	43	43
44	44	44	44
45	45	45	45
46	46	46	46
47	47	47	47
48	48	48	48
49	49	49	49
50	50	50	50
51	51	51	51
52	52	52	52
53	53	53	53
54	54	54	54
55	55	55	55
56	56	56	56
57	57	57	57
58	58	58	58
59	59	59	59
60	60	60	60
61	61	61	61
62	62	62	62
63	63	63	63
64	64	64	64
65	65	65	65
66	66	66	66
67	67	67	67
68	68	68	68
69	69	69	69
70	70	70	70
71	71	71	71
72	72	72	72
73	73	73	73
74	74	74	74
75	75	75	75
76	76	76	76
77	77	77	77
78	78	78	78
79	79	79	79
80	80	80	80
81	81	81	81
82	82	82	82
83	83	83	83
84	84	84	84
85	85	85	85
86	86	86	86
87	87	87	87
88	88	88	88
89	89	89	89
90	90	90	90
91	91	91	91
92	92	92	92
93	93	93	93
94	94	94	94
95	95	95	95
96	96	96	96
97	97	97	97
98	98	98	98
99	99	99	99
100	100	100	100

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

150

20 13

